ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍԻ

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АЛЕКСАНЯН КРИСТИНЕ САРГИСОВНА

СОРАЗМЕРНОСТЬ АДМИНИСТРИРОВАНИЯ В КОНТЕКСТЕ ГАРАНТИРОВАНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04. – «Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Բ. Դանիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն. Ա. Այվազյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գ. Ս. Մուղնեցյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. դեկտեմբերի 23-ին ժ. 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2022թ. նոյեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г. Б. Даниелян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Н. А. Айвазян**

кандидат юридических наук, доцент **Г. С. Мугнецян**

Ведущая организация: **Академия государственного управления РА**

Защита состоится 23-ого декабря 2022г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 11-ого ноября 2022г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության առանցքային պարտականությունն է: Միաժամանակ իրավական պետությունում այդ նույն իրավունքների և ազատությունների երաշխավորումը, ինչպես նաև հանրային և մասնավոր շահերի միջև անհրաժեշտ ներդաշնակություն ապահովելու անհրաժեշտությունը անխուսափելիորեն ենթադրում է որոշակի սահմանափակումներ: Մարդու սահմանադրական իրավունքների իրականացման երաշխավորումը առավելապես կարևորվում է հենց հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման համատեքստում: Խիստ առանցքային է այն հարցադրումը, որ հարկ է հստակ ուրվագծել այդ իրավունքների իրականացմանը հանրային իշխանության չհիմնավորված միջամտությունները բացառելու սահմանները, իսկ այդ համատեքստում բազում կարևոր հիմնահարցեր ներկայումս դեռևս համապարփակ վերլուծության նյութ չեն դարձել:

Այս առումով, վարչարարություն իրականացնելիս մարդու իրավունքների երաշխավորման և դրանց իրականացումը սահմանափակելու իրավաչափության ապահովման տեսանկյունից վարչարարության սկզբունքներից թերևս առավել մեծ դեր ունի համաչափության սկզբունքը, քանի որ վերջինիս բուն նպատակը վարչական մարմինների լիազորությունների իրականացման և այդ լիազորություններն իրականացնելիս մարդու իրավունքների «սահմանափակումների սահմանները» ստույգ որոշելն է: Որպես մարդու իրավունքների երաշխավորման գործիք՝ այս սկզբունքը ենթադրում է, որ բավարար չէ գործողության կատարման՝ օրենքով սահմանված լիազորության առկայությունը. այն պահանջում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռում, վարչական մարմինների կողմից մարդու իրավունքների ցանկացած սահմանափակման հիմնավորվածություն: Եվ չնայած մարդու իրավունքների երաշխավորման և դրանց իրականացումը սահմանափակելու իրավաչափության ապահովման հարցում համաչափության սկզբունքի այդչափ կարևորությանը, ինչպես նաև այն, որ համաչափության սկզբունքը նաև Սահմանադրության 1-ին հոդվածով ճանաչված իրավական պետության սկզբունքի կարևորագույն բաղադրիչ է, այնուամենայնիվ, դրա տեսական և իրավական հիմքերի, չափանիշների և գիտագործնական բազում այլ հարցադրումների առնչությամբ դեռևս նկատվում է համալիր հետազոտություն իրականացնելու կարիք: Թե՛ գործնական կյանքում և թե՛ տեսական հարթությամբ վարչարարության համաչափության սկզբունքը դեռևս պատշաճ ու միատեսակ ընկալում չունի՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

Վարչական մարմինների գործունեության շրջանակներում վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման միատեսակ, կանխատեսելի պրակտիկա գրեթե չի ձևավորվել: Վարչական դատարանը՝ վարչական մարմինների ընտրած միջոցները, որպես կանոն, վերացնում է՝ դրանց համաչափությունը որևէ կերպ հիմնավորված չլինելու հիմքով: Մինչդեռ՝ վարչական հայեցողությունն իրականացնելիս մարդու սահմանադրական իրավունքների

երաշխավորման կարևորագույն գրավականը համաչափության սկզբունքի հետևողական կիրառումն է:

Դատական պրակտիկայում ևս առանձին ոլորտներում (հիմնականում՝ վարչական տույժերի վիճարկման հետ կապված գործերով) վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման միտումը նկատելի է միայն վերջին տարիներին: Այնուամենայնիվ, այս դեպքում դեռևս չափազանց վաղ է խոսել համաչափության սկզբունքի կիրառման կայուն և միասնական պրակտիկայի գոյության մասին: Բոլոր դեպքերում, դատական պրակտիկան ձևավորման այնպիսի փուլում չէ, որ ի զորու լինի հստակ կանխորոշելու վարչարարության ոլորտում հիշյալ սկզբունքի կիրառման սահմանները և մեթոդները:

Մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության հարցի ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը արժևորվեց նաև վերջին ընդամենը մի քանի տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում երեք տեսակի կառավարման հատուկ ռեժիմներ հայտարարելու համատեքստում: Քանի որ կառավարման հատուկ ռեժիմները հանդիսանում են քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման հզոր իրավական գործիք, մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության հարցի քննարկումը ավելի մեծ արդիականություն ձեռք բերեց:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն նկատառումով, որ հայրենական իրավաբանական գրականությունում վարչարարության ինստիտուտն ընդհանրապես, իսկ վարչարարության համաչափության սկզբունքը մասնավորապես դեռևս համակողմանի գիտական հետազոտության նյութ չի դարձել, համալիր չեն ուսումնասիրվել խնդրահարույց և տարբեր մեկնաբանությունների տեղիք տվող այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են՝ համաչափության սկզբունքի կիրառման պայմանները, դրա տարրերից յուրաքանչյուրի էությունն ու բովանդակությունը, կիրառման առանձնահատկությունները և այլն: Ասվածին զուգահեռ, համաշխարհային իրավաբանական գրականությունում համաչափության սկզբունքի նկատմամբ աճող հետաքրքրության մասին խոսելիս բավական է նշել, որ այս սկզբունքին նվիրված շուրջ երեք տասնյակ համընդգրկուն գիտական հետազոտություններից երկուսուկես տասնյակը հեղինակվել են վերջին տասնամյակի ընթացքում: Պետք է նկատել նաև, որ դրանք նվիրված են գերազանցապես սահմանադրական իրավունքի, իսկ երբեմն, նաև միջազգային իրավունքի շրջանակներում համաչափության սկզբունքի ուսումնասիրությանը: Այսպիսով, վարչարարության համաչափության սկզբունքի համալիր գիտական ուսումնասիրություն թե՛ հայրենական և՛ թե արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ չի իրականացվել:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է գիտագործնական չափանիշների հիման վրա համակողմանի ուսումնասիրել վարչարարության համաչափության սկզբունքը և առաջադրել հիմնավորված եզրահանգումներ, որոնք կարող են պիտանի լինել վարչական իրա-

վունքի տեսական հիմքերը առավել համալիր դարձնելու, իրավաստեղծ գործունեությունում և իրավակիրառ պրակտիկայում համաչափության սկզբունքին առնչվող հարցադրումների վերաբերյալ հնարավորինս միասնական դիրքորոշումներ ձևավորելու և ի վերջո համաչափության սկզբունքի կիրառման պրակտիկա ձևավորելու միջոցով վարչական մարմինների գործունեության ընթացքում մարդու իրավունքների համակողմանի պաշտպանությունն ապահովելու գործում:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ հիմնական խնդիրները.

- բացահայտել վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման պայմանները, վեր հանել դրանց հետ կապված գիտագործնական խնդիրները՝ ներկայացնելով այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն համաչափության սկզբունքի՝ մարդու սահմանադրական իրավունքների առավելագույն պաշտպանություն ապահովող կիրառման պրակտիկա.
- հետազոտել վարչարարության համաչափության դերը վարչարարության սկզբունքների համակարգում՝ բացահայտելով վարչարարության համաչափության և վարչարարության մյուս սկզբունքների կապն ու փոխհարաբերակցությունը.
- հետազոտել վարչարարության համաչափության սկզբունքի բոլոր տարրերի բովանդակությունն ու բաղադրիչները, մշակել դրանց գնահատման հիմնական չափանիշները, ապահովել մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության ապահովման գործում այս սկզբունքի տարրերի միջև աշխատանքի հնարավորինս հավասարակշռված բաժանումը.
- բացահայտել կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման հիմնական առանձնահատկությունները.
- համալիր ներկայացնել ուժի կիրառման բովանդակությունը և ըստ այդմ, ուժի գործադրման դեպքում համաչափության սկզբունքի կիրառման շրջանակները, բացահայտել այս դեպքում համաչափության սկզբունքի իրացման առանձնահատկությունները.
- վերլուծել վարչական բողոքարկման և դատական վերանայման համատեքստում վարչարարության համաչափության գնահատման առանձնահատկությունները, մշակել վարչական մարմինների կողմից վարչարարության համաչափության գնահատումների նկատմամբ դատական հարգանքը պայմանավորող գիտագործնական չափանիշները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը վարչարարության համաչափության սկզբունքն է՝ որպես մարդու իրավունքների երաշխավորման գործիք, իսկ առարկան են վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման պայմանների և վարչարարության սկզբունքների համակարգում ունեցած դերի, վարչարարության համաչափության սկզբունքի տարրերի էության ու բովանդակության, դրանց գնահատման հիմնական

չափանիշների, ինչպես նաև վարչարարության համաչափության սկզբունքի իրացման հիմնական առանձնահատկությունների հիմնահարցերը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Համաչափությունը՝ որպես սահմանադրական և միջազգային-իրավական սկզբունք, վերջին շրջանում բավականին արդիական և քննարկվող թեմա է արտասահմանյան իրավաբանական գրականությունում: Հայրենական իրավաբանական գրականությունում այս սկզբունքին անդրադարձ կատարվել է գերազանցապես քրեական իրավունքի, մասնավորապես, պատժի ինստիտուտի համատեքստում: Այսպիսով, թե՛ արտասահմանյան և թե՛ հայրենական իրավաբանական գրականությունում համաչափությանը՝ որպես վարչարարության սկզբունք համալիր գիտական հետազոտության առարկա դեռևս չի դարձել:

Համաչափության սկզբունքի վերաբերյալ հետազոտություններ ունեն Ռոբերտ Ալեքսին, Ահարոն Բարաքը, Մաթիաս Քլատը և Մորթիթզ Մեիսերը, Թոր-Ինգե Հարբոն, Վիկի Զեքսոնը և Մարկ Թուշնեթը, Ֆրանցիսկո Խավիերը և Ուրբինա Մոլֆինոն, Նեյլս Պիտեսենը, Ալան Բրեյդին, Թալյա Սթեիները և Անդրեյ Լանգը, Մոշե Կոհեն-Էլիյան և Իդդո Փորաթը, Ժան Սիկմանը և այլոք: Նշված հեղինակների աշխատանքները, թերևս, առավելապես նվիրված են համաչափության՝ որպես սահմանադրական սկզբունքի ուսումնասիրությանը, սակայն դրանք չափազանց կարևոր տեսական աղբյուրներ են նաև համաչափության՝ որպես վարչարարության սկզբունքի ուսումնասիրության տեսանկյունից:

Հայրենական իրավաբանական գրականությունում, սահմանադրական իրավունքի և քրեական իրավունքի շրջանակներում, համաչափության սկզբունքին անդրադարձել են Ա. Խաչատրյանը, Վ. Վարդանյանը և Վ. Տեր-Գևորգյանը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը, Սահմանադրական դատարանի որոշումները, օրենքները և այլ իրավական ակտերը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքն են կազմում նաև.

- համաչափության սկզբունքի գիտական իմաստավորմանը, ինչպես նաև վարչական իրավունքին և ընդհանրապես իրավագիտության խնդիրներին նվիրված աշխատությունները.
- Միավորված ազգերի կազմակերպության, «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և այլ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների և դրանց խորհրդատվական մարմինների՝ հետազոտության առարկային առնչվող փաստաթղթերը և վերլուծությունները.
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) հարուստ նախադեպային պրակտիկան, Վճռաբեկ դատարանի և վարչական դատարանի, արտասահմանյան երկրների սահմանադրական և այլ բարձրագույն դատական ատյանների ակտերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական, իրավահամեմատական և այլն) մեթոդները: Ատենախոսությունում հատկապես լայնորեն օգտագործվել է իրավահամեմատական մեթոդը, որի կիրառմամբ կոնկրետ հիմնախնդրի կապակցությամբ համեմատական վերլուծության են ենթարկվել ինչպես արտասահմանյան երկրների, այնպես էլ միջազգային դատարանների դատական պրակտիկայում, տարբեր հեղինակավոր միջազգային կառույցների փաստաթղթերում ձևավորված հիմնական մոտեցումները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ վարչարարության համաչափության սկզբունքը գիտական չափանիշներով ենթարկվել է համալիր ուսումնասիրության: Ատենախոսության շրջանակներում հեղինակը վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման համատեքստում հիմնավորել է մարդու իրավունքների և ազատությունների շրջանակի լայն ընկալման անհրաժեշտությունը, վերլուծել է համաչափության սկզբունքի դերը վարչարարության մյուս սկզբունքների, երբեմն նաև դրանց և այլ սուբյեկտիվ իրավունքների միջև բախումները լուծելիս, ինչպես նաև վարչարարության մյուս սկզբունքների դերը վարչարարության համաչափության սկզբունքի կանխատեսելի և հետևողական կիրառման գործում, մշակել է այն չափանիշները, որոնցով վարչական մարմինը պետք է առաջնորդվի Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող նպատակները և մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համատեքստում դրանց լեգիտիմ լինելը որոշելիս, բացահայտել է վարչարարության համաչափության բոլոր տարրերի էությունն ու բաղադրիչները, ներկայացրել դրանց գնահատման հիմնական չափանիշները, բացահայտել և հիմնավորել է կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման հիմնական առանձնահատկությունները, տվել է «ուժի կիրառում» հասկացության այնպիսի բնորոշում, որը կապահովի ուժի գործադրման դեպքում վարչարարության համաչափության սկզբունքի լիարժեք կիրառումը, մշակել է ուժի կիրառման համաչափության ապահովման հիմնական բաղադրիչները, հիմնավորել է վարչական հայեցողության իրականացման համաչափությունը քննելիս ողջամիտ «դատական հարգանք» դրսևորելու անհրաժեշտությունը՝ բացահայտելով հայեցակարգի էությունն ու դրսևորման աստիճանը պայմանավորող հանգամանքները:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, հետազոտության արդյունքներից բխող գիտագործնական նշանակություն ունեցող հետևություններում, եզրահանգումներում և առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Վարչարարության համաչափության սկզբունքի՝ որպես մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման իրա-

վաչափությունը առաջին հերթին պայմանավորված է մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների ծավալի հստակեցմամբ: Այս իմաստով, վարչարարության համաչափության սկզբունքը պետք է կիրառելի լինի վարչական մարմինների կողմից մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ ցանկացած միջամտության դեպքում՝ այդ իրավունքների և ազատությունների շրջանակի լայն ընկալմամբ: Բոլոր այն դեպքերում, երբ վարչական հայեցողության իրականացման արդյունքում թույլ չի տրվում (բացառվում է) ամբողջ ծավալով իրացնել մարդու որևէ իրավունք կամ ազատություն, վարչական մարմինը միջամտող միջոցը կիրառելիս, և հետագայում նաև դատարանը մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս, պետք է ղեկավարվեն վարչարարության համաչափության սկզբունքով:

2. Վարչարարության համաչափության սկզբունքը գտնվում է սերտ կապի և փոխհարաբերակցության մեջ վարչարարության մյուս, մասնավորապես՝ օրինականության, իրավական որոշակիության և օրինական ակնկալիքների պաշտպանության, կամայականության արգելքի, հայեցողական լիազորությունների սահմանափակման և տնտեսվարության սկզբունքների հետ: Վարչարարության համաչափության սկզբունքը, մի կողմից, փոխլրացնում է վարչարարության մյուս սկզբունքներին, լուծում այդ սկզբունքների, երբեմն նաև դրանց և այլ սուբյեկտիվ իրավունքների միջև բախումները: Իսկ մյուս կողմից՝ վարչարարության այլ սկզբունքները անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում համաչափության սկզբունքի հետևողական և կանխատեսելի կիրառման համար:

3. Վարչարարության համաչափության սկզբունքի՝ լեգիտիմ նպատակի տարրը պահանջում է, որ սահմանադրական իրավունքները սահմանափակելիս վարչական մարմինը հետապնդի օրենսդրական ակտերով նախատեսված միայն այնպիսի նպատակներ, որոնք բավականաչափ կարևոր են արդարացնելու այդ իրավունքների սահմանափակումը: Եթե այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ինքնին լեգիտիմ նպատակ է, ապա միշտ չէ, որ հանրային շահը կարող է համարվել լեգիտիմ նպատակ սահմանադրական իրավունքները սահմանափակելու համար: Կարող են գոյություն ունենալ այնպիսի իրավիճակներ, որոնց դեպքում հանրային շահի վկայակոչումը չի կարող հանդես գալ որպես լեգիտիմ նպատակ՝ վարչարարության համաչափության սկզբունքի իմաստով:

Լեգիտիմ նպատակի՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի բաղադրատարրի, առկայությունը պարզելու համար պետք է գնահատել ինչպես սահմանադրի կամ օրենսդրի սուբյեկտիվ մտադրությունները, այնպես էլ օրենսդրական ակտի տեքստից բխող օբյեկտիվ նպատակը, որոնք պետք է համադրվեն և ներդաշնակեցվեն միմյանց հետ: Իսկ այն դեպքում, երբ օրենքի օբյեկտիվ և սուբյեկտիվ նպատակները հակասության մեջ են մտնում, ելնելով դինամիկ մեկնաբանման անհրաժեշտությունից, պետք է առաջնորդվել մեկնաբանման պահին օրենքով հետապնդվող օբյեկտիվ նպատակով:

4. Վարչարարության համաչափության սկզբունքի՝ պիտանիության պահանջը վարչական մարմնին պարտավորեցնում է ընտրել այնպիսի միջոցներ, որոնք բավարար են աջակցելու հետապնդվող լեգիտիմ նպատակի իրականացմանը: Ելնելով մարդու իրավունքների պաշտպանության և հետապնդվող նպատակներին հասնելու արդյունավետության ապահովման միջև հավասարակշռությունից՝ վարչարարության համաչափության սկզբունքի պիտանիության պահանջը պետք է հիմնվի այն գաղափարի վրա, ըստ որի՝ պարտադիր չէ, որ վարչական մարմինը միջամտող միջոցի ընտրության պահին հաստատապես համոզված լինի, որ ընտրված միջոցով վստահաբար հասնելու է հետապնդվող լեգիտիմ նպատակի լիարժեք իրականացմանը:

Վարչարարության համաչափության սկզբունքի՝ անհրաժեշտության չափանիշն իր հերթին պահանջում է, որ լեգիտիմ նպատակին հասնելու համար պիտանի բոլոր միջոցներից պետք է ընտրվի այն միջոցը, որով հնարավոր կլինի հետապնդվող նպատակին հասնել նույն արդյունավետությամբ, սակայն սահմանադրական իրավունքը կամ ազատությունը առավել մեղմ սահմանափակելով: Եթե վարչական մարմնից պահանջվի այլընտրանքային միջոցի հավասար արդյունավետություն, ապա անհրաժեշտության չափանիշի նախատեսումն անիմաստ կդառնա: Անհրաժեշտության չափանիշը պետք է հիմնվի այն մոտեցման վրա, որ պետք է նախապատվություն տալ հետապնդվող լեգիտիմ նպատակին հասնելու համար պիտանի այն միջոցին, որը, ավելի քիչ սահմանափակելով մարդու սահմանադրական իրավունքը, կհասնի հետապնդվող լեգիտիմ նպատակին համարժեք արդյունավետությամբ, բայց չի առաջացնի այլ հետևանքներ, քան ընտրված միջոցը:

5. Վարչարարության համաչափության սկզբունքի՝ համարժեքության պահանջի հնարավորինս օբյեկտիվ և կանխատեսելի կիրառումն ապահովելու համար հակադրվող հանրային բարիքների հավասարակշռման գործընթացում անհրաժեշտ է հիմք ընդունել հետևյալ մոտեցումները.

- մրցակցող բարիքների արժեքը պետք է գնահատվի ոչ թե սոսկ ընդհանուր, վերացական հարթությամբ, այլ հաշվի առնելով այն պայմանների համատեքստում, որում դրանք բախվում են.

- եթե մրցակցող բարիքները հիմնարար իրավունքներն են, ապա պետք է նկատի ունենալ, որ սահմանադրական իրավունքները, ունենալով նույն նորմատիվային կարգավիճակը, չունեն միատեսակ սահմանադրական նշանակություն.

- համարժեքության գնահատման փուլում սահմանադրական իրավունքներին պետք է վերապահել ավելի բարձր կշիռ, քան հանրային շահ համարվող (ներկայացվող) նկատառումներին կամ գործոններին.

- հավասարակշռման արդյունքի վրա դրա բոլոր հնարավոր գործոններից առավել մեծ ազդեցություն ունի սահմանադրական իրավունքին միջամտության աստիճանը.

- հավասարակշռման գործընթացի վերջնարդյունքում վարչական մարմինը պետք է փորձի հասնել հանրային բարիքների միջև այնպիսի փոխզիջ-

ման ապահովմանը, երբ յուրաքանչյուր սկզբունք կդիտարկվի, որպես տվյալ իրավիճակում հնարավոր առավելագույն պաշտպանության օբյեկտի.

- վարչական մարմնի ընտրած միջոցը կհամապատասխանի վարչարարության համաչափության համարժեքության պահանջին, եթե հետապնդվող լեգիտիմ նպատակի իրացման արդյունքում պատճառված վնասը չգերազանցի այդ նպատակի իրացումից ձեռք բերվող օգուտը:

6. Համաչափության սկզբունքի համատեքստում կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում սահմանվող լրացուցիչ սահմանափակումների ու պահանջների հիմնական առանձնահատկությունը դրանց նպատակի երկակի բնույթն է. սահմանափակումների միջանկյալ նպատակն այն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, որոնց համար տվյալ կառավարման հատուկ ռեժիմը պայմանավորող իրավիճակը սպառնալիք է ստեղծել, իսկ դրանց վերջնական և գերակա նպատակը բնականոն վիճակի վերականգնումն է: Ըստ այդմ, կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում սահմանված ցանկացած միջոցի համաչափության (պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության) գնահատումը պետք է կատարվի ոչ միայն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, այլ նաև ստեղծված ճգնաժամը հաղթահարելու տեսանկյունից:

7. Ուժի կիրառման համաչափությունը գնահատելիս «ուժի կիրառում» պետք է որակել ոչ միայն անձանց կամ առարկաների նկատմամբ ֆիզիկական միջոցների անմիջական գործադրումը, այլ նաև դրանց գործադրման նախազգուշացումը կամ սպառնալիքը՝ անձանց վրա ֆիզիկական կամ հոգեբանական ներգործության, ինչպես նաև գույքը վնասելու միջոցով նրանց որոշակի վարքագիծ հարկադրելու կամ վարքագծի վրա ազդելու նպատակով: Միևնույն ժամանակ, ուժի կիրառման համաչափության ապահովման նախադրյալները հանգում են հետևյալին՝

- իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական պատշաճ պատրաստվածությունը և նյութատեխնիկական բարձր հագեցվածությունը.

- ուժի կիրառման յուրաքանչյուր կոնկրետ դեպքի նախնական պլանավորման և դրա հետևանքների վերացման համար նախօրոք միջոցներ ձեռնարկելու պարտադիրությունը.

- ուժի կիրառման բոլոր տեսակների առանձնահատկությունները մանրամասն կարգավորող կանոնների առկայությունը:

8. Իշխանությունների բաժանման գործառութային ասպեկտը պահանջում է, որ վարչական հայեցողության իրականացման համաչափությունը քննելիս դատարանը ոչ միայն չստանձնի վարչական մարմնի գործառույթները, այլ նաև նրա գնահատումները չհանգեցնեն վարչական մարմնի հայեցողական լիազորությունների անհարկի միջամտությանը՝ դրանով իսկ վերացնելով արդարադատության և գործադիր իշխանությունների միջև անհրաժեշտ սահմանագիծը: Նշվածով պայմանավորված՝ վարչարարության համաչափությունը որոշելիս դատարանը պետք է փորձի զերծ մնալ վարչական

մարմնին ակամա փոխարինելու իրավիճակներից՝ ելնելով վարչական մարմինների ինքնուրույնության նկատմամբ «դատական հարգանքի» հայեցակարգից: «Դատական հարգանքի» հայեցակարգի հիմքում ընկած են հետևյալ հանգամանքները՝

ա) ընդհանուր (վարչական մարմնի ինստիտուցիոնալ առանձնահատկություններին վերաբերող) հիմքեր՝

- վարչական մարմինների ժողովրդավարական լեգիտիմությունը՝ ընտրազանգվածին առավել հաշվետու լինելը,

- վարչական մարմինների կարգավիճակի առանձնահատկությունները՝ դերը, խնդիրներն ու գործառույթները, կազմակերպման և գործունեության սկզբունքները,

- վարչական մարմինների ինստիտուցիոնալ կոմպետենտությունը՝ որոշումներ կայացնելիս կոմպետենտության առավելագույն աստիճան ունենալը, և

բ) հատուկ (կոնկրետ գործի առանձնահատկություններին վերաբերող) հիմքերը՝

- կոնկրետ դեպքում շոշափվող մարդու սահմանադրական իրավունքի կարևորությունն ու դրան միջամտության աստիճանը,

- իրականացված վարչարարության որակը, որի գնահատման հիմնական չափանիշը պատշաճ վարչարարության իրավունքի ապահովված լինելու արդյունավետությունն է. որքան բարձր է վարչական մարմնի կողմից իրականացված վարչարարության որակը, այնքան ավելի մեծ կշիռ պետք է տալ վարչական մարմնի ընտրությանը, և այնքան ավելի լուրջ հիմքեր պետք է լինեն դատական վերանայման միջոցով այդ ընտրությունը վերացնելու համար:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության գիտական նշանակությունը վարչարարության ինստիտուտի համատեքստում համաչափության սկզբունքի էության բացահայտումը և դրա կիրառման վերաբերյալ նոր ասպեկտների և դիրքորոշումների առաջադրումն է: Ատենախոսությունում ներկայացված եզրահանգումները հնարավորություն են տալիս հետագայում առավել առարկայական դարձնելու համաչափության սկզբունքին առնչվող գիտական հետազոտությունները, օգտագործելու դրանք վարչական իրավունքի այլ ինստիտուտների վերաբերյալ առավել խորացված հետազոտություններ իրականացնելիս:

Ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարեփոխման համար, նպաստել ինչպես դատական պրակտիկայի, այնպես էլ վարչական մարմինների իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նաև «Վարչական իրավունք», «Վարչական վարույթ և դատավարություն» և բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան առնչվում է մարդու սահմա-

նադրական իրավունքներին և դրանց պաշտպանության գործում հիմնարար կարևորություն ունեցող համաչափության սկզբունքին:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, ինչպես նաև համալսարանական գիտաժողովներին ներկայացրած զեկույցներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք բաժանված են ընդհանուրն ութ պարագրաֆի), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացրել մշակվածության աստիճանը, հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքը, նորմատիվ-իրավական և աղբյուրագիտական հիմքերը, գիտագործնական նշանակությունը, արդյունքների հիմնավորվածություն ու արժանահավատությունը, արդյունքների փորձարկումը, ձևակերպել է գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման պայմանները» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակն անդրադարձել է մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման՝ որպես համաչափության սկզբունքի կիրառումը պայմանավորող առաջին պայմանի բնորոշմանն ու հիմնական եղանակներին: Մարդու սահմանադրական իրավունքների վարչաիրավական սահմանափակումը բնորոշելով որպես մարդու սահմանադրական իրավունքի շրջանակի (ծավալի) նեղացում՝ հեղինակը համաչափության սկզբունքի կիրառման համատեքստում հիմնավորվել է այն հիմնական ուղենիշերը, որոնցով պետք է առաջնորդվեն վարչական մարմինը կամ դատարանը իրավունքի շրջանակի (ծավալի) որոշելիս և, ըստ այդմ, իրավունքի սահմանափակման փաստը հաստատելիս:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Վարչարարության համաչափության սկզբունքի դերը վարչարարության սկզբունքների համակարգում» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը վերլուծել է վարչարարության համաչափության և վարչարարության մյուս, մասնավորապես, վարչարարության օրինականության, իրավական որոշակիության և օրինական ակնկալիքների պաշտպանության, կամայականության արգելման, հայեցողական լիազորությունների սահմանափակման և տնտեսվարության սկզբունքների սկզբունքների միջև կապն ու փոխգործակցության ներդաշնակությունը մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության համատեքստում: Այս համատեքստում հեղինակը դատական պրակտիկայի և հեղինակավոր միջազգային կառույցների փաստաթղթերի վերլուծության հիման վրա հետազոտել է թե՛ համաչափության սկզբունքի դերը վարչարարության մյուս սկզբունքների, երբեմն նաև դրանց և այլ սուբյեկտիվ իրավունքների միջև բախումները լուծելիս, թե՛ վարչարարության մյուս սկզբունքների դերը վար-

չարարության համաչափության սկզբունքի կանխատեսելի և հետևողական կիրառման գործում:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Լեգիտիմ նպատակը՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի տարր» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը քննարկել է այն հարցը, թե վարչարարության շրջանակներում որ նպատակները կարող են արդարացնել մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակումները: Պարագրաֆում հեղինակը մշակել է նաև այն չափանիշները, որոնցով վարչական մարմինը պետք է առաջնորդվի Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող նպատակները և մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համատեքստում դրանց լեգիտիմ լինելը որոշելիս:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Պիտանիությունը և անհրաժեշտությունը՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի տարրեր» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը բացահայտել է պիտանիության և անհրաժեշտության պահանջների էությունն ու բաղադրիչները, ինչպես նաև ներկայացնել է վարչարարության համաչափության սկզբունքի այս երկու տարրերի գնահատման հիմնական չափանիշներն այնպես, որ ապահովվի մի կողմից մարդու սահմանադրական իրավունքների առավելագույն պաշտպանության և հետապնդվող լեգիտիմ հանրային շահերին հասնելու կարևորության միջև պատշաճ հավասարակշռությունը, իսկ մյուս կողմից՝ համաչափության սկզբունքի տարրերի միջև աշխատանքի հնարավորինս հավասար բաժանումը: Տարբերակելով վարչարարության համաչափության պիտանիության և անհրաժեշտության պահանջների գնահատման նյութական և ընթացակարգային չափանիշները՝ պարագրաֆում միջազգային և ներպետական դատական պրակտիկայի համակողմանի վերլուծության հիման վրա հեղինակը ներկայացվել է դրանց կիրառման իր տեսլականը:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Համարժեքությունը՝ վարչարարության համաչափության սկզբունքի համատեքստում» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հեղինակը հետազոտել և վերլուծել է համարժեքության գնահատման, այն է՝ հավասարակշռման հիմնական տարրերը և իրականացման գործընթացը: Կարևորելով համարժեքության պահանջի հնարավորինս օբյեկտիվ և կանխատեսելի կիրառումը՝ առաջադրվել են հավասարակշռման, այդ թվում՝ դրա առավել վիճելի և խնդրահարույց ասպեկտների գնահատման ընդունելի մոտեցումները: Պարագրաֆում հեղինակը փորձ է արել հիմնավորված կերպով պատասխանել նաև վարչարարության համաչափության սկզբունքի համարժեքության տարրին վերաբերող հիմնական քննադատություններին:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ «Սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափությունը կառավարման հատուկ ռեժիմի պայմաններում» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը, առանձնացնելով կառավարման հատուկ ռեժիմների՝ համաչափության սկզբունքի կիրառումը կանխորոշող հատկանիշները, բացահայտել և հիմնավորել է այդ ռեժիմների պայմաններում վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման

հիմնական առանձնահատկությունները: Դրանց հիման վրա պարագրաֆում քննարկման առարկա է դարձվել վերջին մի քանի տարվա ընթացքում Երկրում հայտարարված կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում կիրառված որոշ սահմանափակումների և կասեցումների համաչափությունը:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ «Ուժի կիրառման դեպքում համաչափության սկզբունքի իրացման առանձնահատկությունները» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում համեմատական փորձի ու ուժի կիրառման գործնական իրավիճակների վերլուծության հիման վրա տրվել է «ուժի կիրառում» հասկացության այնպիսի բնորոշում, որը, լինելով առավել ընդգրկուն և ամբողջական, կապահովի ուժի կիրառման դեպքում վարչարարության համաչափության սկզբունքի լիարժեք կիրառումը: Պարագրաֆում միջազգային դատական պրակտիկայի, հեղինակավոր միջազգային կառույցների դիրքորոշումների, համեմատական փորձի համակողմանի վերլուծության հիման վրա մշակվել են ուժի կիրառման համաչափության ապահովման հիմնական բաղադրիչները:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ «Վարչական բողոքարկման և դատական վերանայման համատեքստում համաչափության գնահատման արդի հիմնահարցերը» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հեղինակը, նախ ներկայացրել է վարչարարության համաչափության վերանայման առանձնահատկությունները՝ դատական և վարչական բողոքարկման եղանակներից յուրաքանչյուրի դեպքում: Ապա, հատկապես կարևորելով իշխանությունների բաժանման գործառութային ասպեկտը, պարագրաֆում հիմնավորվել է վարչական հայեցողության իրականացման համաչափությունը քննելիս ողջամիտ «դատական հարգանք» դրսևորելու անհրաժեշտությունը՝ բացահայտելով հայեցակարգի էությունն ու դրսևորման ձևերը: Միևնույն ժամանակ, դատական հարգանքի հայեցակարգի համակողմանի ուսումնասիրությամբ ներկայացվել են նաև դրա դրսևորման աստիճանը պայմանավորող հանգամանքները՝ դասակարգելով ընդհանուրի և հատուկի:

Ատենախոսության եզրակացությունում առանձնացվել են հետևյալ եզրահանգումները՝

1. Դատական պրակտիկայում սահմանադրական սուբյեկտիվ իրավունքի ծավալը, որպես կանոն, համարժեք չի մեկնաբանվում: Ընդ որում, իրավունքի շրջանակը որոշելիս, Վճռաբեկ դատարանը, թերևս, անհամաչափ է անդրադառնում հանրային և մասնավոր շահի հարաբերակցության հարցադրմանը: Սույն թեզում մենք հիմնավորել ենք, որ հայրենական իրավական համակարգում համաչափության սկզբունքը համարվում է վարչարարության հիմնարար սկզբունքներից, իսկ հանրային շահով թելադրված սահմանափակումները կարող են տեսագործնական նշանակություն ունենալ միայն սահմանադրական իրավունքի սահմանափակման համաչափության, մասնավորապես, դրա պատշաճ նպատակի և չափավորության պահանջների և հիմնավորվածության գնահատման տեսանկյունից:

2. Ընդգծելով թեմայի հարցադրումների համատեքստում տնտեսվարության բաղադրիչների ազդեցությունը, ըստ այդմ էլ՝ անդրադառնալով այն

հարցին, թե արդյո՞ք տնտեսվարության առնչությամբ նկատառումները կարող են լինել մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման լեգիտիմ նպատակ, ուսումնասիրության արդյունքներով եզրահանգել ենք, որ հիշյալ նկատառումների նկատմամբ իրավունքների առաջնահերթությունը պետք է ելակետային լինի: Այնուամենայնիվ, գտնել ենք, որ տնտեսվարությունը կամ բյուջետային սահմանափակումները՝ առավելապես անմիջականորեն առնչվելով հանրային շահին, կարող են առանձին դեպքերում նաև լեգիտիմ լինել, մասնավորապես՝ երբ համաչափության սկզբունքի հետևողական կիրառման արդյունքում տնտեսական նպատակը բավարար է մարդու իրավունքների սահմանափակումներն արդարացնելու համար:

3. Գտնում ենք, որ վարչարարության համաչափության սկզբունքի պիտանիության չափանիշից բխում է, որ վարչական մարմնի կողմից որևէ սահմանափակող միջոցի կիրառումը հիմնավորվի ոչ միայն օրենքով սահմանված, տվյալ դեպքում հետապնդվող կոնկրետ նպատակի, այլ նաև վերջինիս ընդհանուր քաղաքականության և պրակտիկայի համատեքստում, այն իմաստով, որ եթե վարչական մարմինը որևէ սահմանափակող միջոցի կիրառումը հիմնավորում է օրենքով սահմանված կոնկրետ նպատակի հասնելու անհրաժեշտությամբ, ապա վերջինիս կիրառմամբ պետք է հիմնավորի, որ վարչական մարմինն այդ նպատակը հետապնդում է հետևողականորեն, ոչ թե միայն կոնկրետ գործով: Այս համատեքստում վարչական մարմնի կողմից հետևողականություն չդրսևորելը կարող է առաջացնել նաև հիմնավոր կասկածներ առ այն, որ վարչական մարմինն անաչառ չէ միջոցի նպատակի ընտրության մեջ:

4. Գիտական հարթությամբ դեռևս չի ձևավորվել միասնական մոտեցում այն մասին, թե վարչական մարմնի ընտրած միջոցը պետք է համապատասխանի պիտանիության և անհրաժեշտության նյութական, թե ընթացակարգային չափանիշներին: ՄԻԵԴ-ի և հայրենական վարչական պրակտիկայի վերլուծության հիման վրա եզրահանգել ենք, որ վարչարարության համաչափության սկզբունքի պիտանիության և անհրաժեշտության պահանջները ներառում են ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային չափանիշները, որոնք ոչ թե բացառում, այլ փոխպայմանավորում են միմյանց և կազմում են ներքին տրամաբանական ամբողջություն: Այսինքն՝ ընտրված վարչական միջոցի պիտանիությունն ու անհրաժեշտությունը որոշելիս դատարանը ոչ միայն պետք է պարզի, թե արդյո՞ք որոշում կայացնող վարչական մարմինը պատշաճ քննել է միջոցի պիտանի լինելը և պակաս միջամտող միջոցի առկայության կամ բացակայության հարցը, այլև իրականացնի պիտանիության և պակաս միջամտող միջոցի կիրառման հնարավորության և արդյունավետության իր հայեցողական գնահատում՝ անկախ որոշում կայացրած վարչական մարմնի դիրքորոշումից:

5. Առաջարկում ենք, ինչպես լեգիտիմ նպատակի, այնպես էլ վարչական միջոցի համարժեքության գնահատման փուլում սահմանադրական իրավունքներին վերապահել ավելի բարձր արժեք, քան հանրային շահ համարվող հիմքերին՝ ելնելով մարդու բարձրագույն արժեք լինելու, մարդու անօ-

տարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք ճանաչելու սահմանադրական սկզբունքից:

6. Մարդու սահմանադրական իրավունքը սահմանափակող վարչական միջոցի համարժեքության գնահատումը պահանջում է հավասարակշռել մի կողմից, սահմանադրական իրավունքի նշանակությունը, միջամտության կամ վնասի աստիճանը, վնասն առաջանալու հավանականությունը, և մյուս կողմից՝ մրցակցող իրավունքի կամ հանրային շահի կշիռը, դրանց բավարարման կամ ակնկալվող օգուտի աստիճանը, և օգուտն իրականում ձեռք բերելու հավանականությունը: Որպես հավասարակշռման մեթոդի հիմնական բաղադրիչներ՝ հիշյալ տարրերը, այնուամենայնիվ, չեն սպառում համարժեքության ողջ ծավալը: Համարժեքությունը գնահատելիս վարչական մարմինը կարող է հաշվի առնել նաև այն այլընտրանքային միջոցի ազդեցությունը, որն անհրաժեշտության փուլում չի ընդունվել, նպատակի անհետաձգելիության աստիճանը, ինչպես նաև համաչափության նախորդ փուլերի քննարկման ընթացքում բարձրացված այլ հանգամանքները:

7. Անդրադառնալով համարժեքության տարրի ոչ օբյեկտիվ և անորոշ լինելու քննադատությանը՝ գտնում ենք, որ ինչպես համարժեքության ներկայացված կառուցվածքը, այնպես էլ պատշաճ վարչարարության օրենսդրությամբ սահմանված պահանջների հետևողական կատարումը կապահովեն այս պահանջի առավելագույն օբյեկտիվ և կանխատեսելի կիրառումը:

8. Իրավաբանական գրականության, ինչպես նաև միջազգային կառույցների դիրքորոշումների ուսումնասիրության հիման վրա առանձնացրել ենք նշված ռեժիմի պայմաններում թե՛ համաչափության սկզբունքի պահպանման կարևորությունը և թե՛ դրա կիրառման առանձնահատկությունները բնորոշող կառավարման հատուկ ռեժիմի հետևյալ հիմնական հատկանիշները՝

- վերջնական նպատակը կենսագործունեության նորմալ պայմանների վերականգնումն է.
- անմիջականորեն կապված է անձի իրավունքները սահմանափակող միջոցների ընդունման հետ, և այս համատեքստում կառավարման հատուկ ռեժիմը կարելի է համարել «կոպիտ» իրավական ռեժիմ.
- քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման նպատակն ակնհայտորեն պայմանավորված է տվյալ միջոցի կիրառումն առաջացրած հանգամանքներով.
- ենթադրում է գործադիր իշխանության մարմինների լիազորությունների ընդլայնում:

9. Առաջարկվել է օրենսդրությամբ նախատեսել պահանջ, ըստ որի՝ արտակարգ դրություն հայտարարելիս Կառավարությունը պետք է հիմնավորի, թե ինչու ներպետական օրենսդրությամբ նախատեսված ավելի մեղմ իրավական ռեժիմի սահմանմամբ հնարավոր չէ հաղթահարել ստեղծված ճգնաժամը: Կարևորում ենք նաև օրենսդրական այնպիսի մոտեցումները, որոնք բացի ուղղակի ժամկետային սահմանափակումից և անկախ հայտարարված արտակարգ դրության ժամկետից, Կառավարությանը կպարտավորեցնեն պարբերաբար վերանայել ինչպես արտակարգ դրության, այնպես էլ առան-

ձին արտակարգ միջոցառումների անհրաժեշտությունը՝ ապահովելու դրանց համաչափությունը՝ թե՛ ժամանակային և թե՛ տարածքային չափանիշներով: Միաժամանակ, եթե «անխուսափելի վտանգը» առաջացնում է այնպիսի իրավիճակ, որը հիմնված է մշտական սպառնալիքի վրա, հարկ է դիմակայել արդեն նորմատիվ կարգավորումների միջոցով:

10. Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի ընթացքում հայտարարված կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում առավել խիստ և ոչ համաչափ սահմանափակումների են ենթարկվել քաղաքական իրավունքները: Կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում համաչափության սկզբունքի կիրառման առանձնահատկությունների հաշվառմամբ մանրամասն վերլուծելով հայտարարված արտակարգ դրության ժամանակ խոսքի և հավաքների ազատության իրավունքների կասեցման համաչափությունը՝ եզրակացրել ենք, որ այս երկու իրավունքների կասեցումները չեն համապատասխանել այս սկզբունքին:

11. Թեև համաչափության սկզբունքը կիրառվում է հարաբերական իրավունքների սահմանափակումների հիմնավորվածությունն ապահովելու նպատակով, նկատել ենք, որ ուժի կիրառման դեպքում արժանապատվության իրավունքի խախտման հարցը որոշելիս վերջինս ունի մեկ այլ նպատակ և կիրառում, այն է՝ նպաստել արժանապատվության իրավունքի խախտման որոշման համար անհրաժեշտ այնպիսի հասկացությունները մեկնաբանելուն, ինչպիսիք են՝ Սահմանադրության 26-րդ կամ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածներում նշված վերաբերմունքը կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող պատիժը: Այսպիսով, եզրահանգել ենք, որ համաչափության չափանիշը կիրառվում է ոչ թե մարդկային արժանապատվության՝ որպես բացարձակ արժեքի, այլ միայն նշված հասկացությունների մեկնաբանության նկատմամբ:

12. Առաջարկվել է ուժի կիրառման համաչափության պահանջը նախատեսել նաև ներպետական օրենսդրության համաձայն՝ ուժի կիրառման իրավասություն ունեցող մասնավոր անձանց նկատմամբ: Այս դիրքորոշումը առաջադրելիս, հիմք է ընդունվել նաև ինչպես հեղինակավոր միջազգային փորձագիտական կառույցների դիրքորոշումները, այնպես էլ այն մոտեցումը, որ պետությունը, ըստ էության, այս անձանց պատվիրակել է ոստիկանական լիազորություններ:

13. Վարչարարության համաչափության վարչական վերանայման առանձնահատկությունների վերլուծության արդյունքում եզրակացրել ենք, որ վարչական բողոքը քննող վարչական մարմինն ընտրված միջոցի համաչափությունը գնահատում է ողջ ծավալով: Ավելին, վարչական մարմինը ոչ միայն կարող է փոխարինել ընտրված իր գնահատմամբ ոչ համաչափ միջոցը՝ համաչափ միջոցով, այլ նաև կարող է համաչափ միջոցը փոխարինել մեկ այլ՝ ավելի նպատակահարմար համաչափ միջոցով: Մինչդեռ, դատարանի կողմից վարչական հայեցողության իրականացման համաչափության գնահատման առանձնահատկությունների վերլուծության հիման վրա եզրահանգել ենք, որ վարչական դատարանը չպետք է փոխարինի վարչական մարմնի

որոշումներն ու գնահատումները սեփական որոշումներով և գնահատումներով. վարչական դատարանը պարտավոր է հարգանք դրսևորել վարչական մարմնի կողմից համաչափության տարբեր պահանջների գնահատումների նկատմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Ալեքսանյան Ք. Ս., Սահմանադրական իրավունքի ծավալը՝ վարչարարության համաչափության սկզբունքի համատեքստում// ԵՊՀ իրավ. ֆակուլ.: Ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու: Գլխ. խմբ՝ Գ.Ս. Ղազինյան: Եր.: ԵՊՀ հրատ., 1(2), 2020, 2021, էջեր 154-173:

2. Ալեքսանյան Ք. Ս., Վարչարարության համաչափության և մյուս սկզբունքների ներդաշնակությունը մարդու սահմանադրական իրավունքների երաշխավորման համատեքստում // Օրինականություն, № 122, 2021, էջեր 10-16:

3. Ալեքսանյան Ք. Ս., Լեգիտիմ նպատակը՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի տարր // Արդարադատություն, 2021, 1 (53), էջեր 69-76:

4. Ալեքսանյան Ք. Ս., Համարժեքությունը՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի տարր // Դատական իշխանություն, ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԱՄԲԵՐ 2021, 11-12, էջեր 18-28:

5. Ալեքսանյան Ք. Ս., Պիտանիությունը և անհրաժեշտությունը՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի տարրեր // Արդարադատություն, 2022, 1 (56), էջեր 38-46:

6. Ալեքսանյան Ք. Ս., Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը // Պետություն և իրավունք, № 1 (92) 2022, էջեր 37-46:

7. Ալեքսանյան Ք. Ս., Մադրու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափությունը կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (7), 2022, էջեր 16-26:

Summary

KRISTINE SARGIS ALEKSANYAN

PROPORTIONALITY OF ADMINISTRATION IN THE CONTEXT OF GUARANTEEING HUMAN RIGHTS

The principle of proportionality of administration plays a crucial role during the implementation of administration from the point of view of ensuring human rights and providing the legality of restrictions on their realization, since the main purpose of the principle is to accurately determine the "limits of restrictions" of human rights in the exercise of the powers of administrative bodies. As a tool for guaranteeing human rights, this principle assumes that it is not enough to have the powers established by law to perform an action: it requires balancing public and private interests, justifying any restriction of human rights by administrative bodies.

Within the framework of the dissertation, the author analyzed the relationship and harmony of interaction between the proportionality of administration and other principles of administration in the context of guaranteeing and protecting human rights, presenting the role of the principle of proportionality in resolving conflicts between other principles of administration, and sometimes between them and other subjective rights, as well as the role of other principles of administration in the predictable and consistent application of the principle of proportionality of administration.

The author discussed the question of what goals within the framework of administration can justify restrictions on constitutional human rights. The author developed criteria that should guide the administrative body in determining the goals pursued by the Constitution and the law, and their legitimacy in the context of the restriction of constitutional human rights.

The work identifies the essence and components of the requirements for the suitability and necessity of proportionality of administration, presents the main criteria for their evaluation. Distinguishing between the material and procedural criteria for assessing the suitability and the necessary requirements of the proportionality of administration, the author presented his vision of their application.

In the dissertation, the author researched and analyzed the main elements of the adequacy assessment, namely balancing and the implementation process. Acceptable approaches to balancing were put forward, including the assessment of the most controversial and problematic aspects of that. The author also tried to reasonably respond to the main criticism of the element of adequacy of the principle of proportionality of administration.

Having identified the features that predetermine the application of the principle of proportionality during special legal regimes, the author identified and justified the main features of the application of the principle of proportionality of administration in the conditions of these regimes.

Based on comparative experience and analysis of practical situations of the use of force, the author has given such a definition of the concept of "use of force", which, being more comprehensive and holistic, will ensure the full application of the principle of proportionality of administration in the use of force. Based on a comprehensive analysis of international judicial practice, the positions of authoritative international institutions, comparative experience, the main components of ensuring the proportionality of the use of force have been developed.

Emphasizing the functional aspect of the separation of powers, within the framework of the dissertation, the author justified the need for a reasonable "judicial deference" when considering the proportionality of the exercise of administrative discretion, revealing the essence and forms of manifestation of the concept. At the same time, on the basis of a comprehensive study of the concept of judicial deference, the circumstances that determined the degree of its manifestation were also presented.

Резюме

АЛЕКСАНЯН КРИСТИНЕ САРГИСОВНА

СОРАЗМЕРНОСТЬ АДМИНИСТРИРОВАНИЯ В КОНТЕКСТЕ ГАРАНТИРОВАНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА

Принцип соразмерности администрирования играет важнейшую роль с точки зрения гарантирования прав человека при осуществлении администрирования и обеспечения правомерности ограничения их осуществления, поскольку его цель - точно определить «пределы ограничений» прав человека при осуществлении полномочий административных органов. В качестве инструмента гарантирования прав человека этот принцип предполагает, что недостаточно наличия установленных законом полномочий для совершения действия: он требует уравновешивания общественных и частных интересов, обоснования любого ограничения прав человека административными органами.

В рамках диссертации автор проанализировала связь и гармонию взаимодействия между соразмерности и другими принципами администрирования в контексте гарантирования и защиты прав человека, представив роль принципа соразмерности при разрешении конфликтов между другими принципами, а иногда и между ними и другими субъективными правами, а также роль других принципов в предсказуемом и последовательном применении принципа соразмерности.

Автор обсудила вопрос о том, какие цели в рамках администрирования могут оправдать ограничения конституционных прав человека. Автор разработала критерии, которыми должен руководствоваться административный орган при определении целей, преследуемых Конституцией и законом, и их легитимности в контексте ограничения конституционных прав человека.

В работе выявлены сущность и компоненты требований к пригодности и необходимости соразмерности администрирования, представлены основные критерии их оценки. Дифференцируя материальные и процедурные критерии оценки пригодности и необходимых требований соразмерности администрирования, автор представила свое видение их применения.

В диссертации исследована и проанализирована оценка эквивалентности, в частности, основные элементы балансировки и процесс реализации. Были выдвинуты приемлемые подходы к оценке балансировки, в том числе в отношении к ее наиболее спорным и проблемным аспектам. Автор также попыталась обоснованно ответить на

основную критику касательно элемента эквивалентности принципа соразмерности администрирования.

Выделив особенности, предопределяющие применение принципа соразмерности специальных режимов управления, автор выявила и обосновала основные особенности применения принципа соразмерности администрирования в условиях этих режимов.

На основе сравнительного опыта и анализа практических ситуаций применения силы автор дала такое определение понятия «применение силы», которое, будучи более всеобъемлющим и целостным, обеспечит полное применение принципа соразмерности администрирования при применении силы. На основе всестороннего анализа международной судебной практики, позиций авторитетных международных структур, сравнительного опыта разработаны основные компоненты обеспечения соразмерности применения силы.

Подчеркивая функциональный аспект разделения властей, в рамках диссертации автор обосновала необходимость проявления разумного «судебного уважения» при рассмотрении соразмерности осуществления административного усмотрения, раскрывая сущность и формы проявления концепции. В то же время всесторонним исследованием концепции судебного уважения были представлены также обстоятельства, обуславливающие степень ее проявления.